

ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ «ՎԱԳՐԵՆԱՎՈՐԸ» ՊՈԵՄԻ ՄԱՍԻՆ

«Դավիթ արքայից-արքայի պատմություն» կոչված երկասիրություն անանուն հեղինակը (12-րդ դար), խոսելով Դավիթ Շինոզ թագավորի ժամանակաշրջանի (1089—1125) մասին, ի միջի այլոց, մատնանշում է, որ այս Դավիթը երկու զուտոր ուներ, որոնցից անդրանիկը՝ Թամարը՝ ամուսնացած էր Շիրվան-շահի հետ, իսկ կրտսերը՝ Կատան՝ Հունաստանի (Բյուզանդիայի) թագավորի հետ: Այս տեղեկությունը նույն պատմիչն ավելացնում է, որ հիշյալ աղջիկները «իրբև լուսատուներ՝ մեկն արևելքում, իսկ մյուսն արևմուտքում, բաժանած ուներին լուսազարդ երկնակամարը, որոնք իրենց հորից, իբրև արևից, էին ստանում լուսաճաճանչ ճառագայթները» (վիթարցա օրնի մնաթոբնի, էրթի աղմոսավլեթս, էրթի դասավլեթս, ցիսկրովան հոփոդեն սփերոսա, մամիսագան միմդերենի մդեբրթա շարավանդեթանի):

Հաևանն այստեղ, իհարկե, այն չէ, թե վրաց թագավորն իր աղջիկներին մարդու է տվել Շարվանի և Բյուզանդիայի արքաներին, այլ այն, որ այս տեղեկության մեջ միաժամանակ տրված է միապետականության բովով անցնող 12—13-րդ դարերի Վրաստանի ֆեոդալական խավերի իդեոլոգիայի բնութագրերը, ուր բավական ցայտուն կերպով արտահայտված է, նախ՝ կնոջ պաշտամունքը, երկրորդ՝ լուսատուների աստվածացումը, և երրորդ՝ հայացք Վրաստանի, որպես Արևելքի և Արևմուտքի միջասանանի վրա:

Ահա այս երեք հատկանիշներն են, որ կարմիր գծով անցնում են վրաց ժողովրդի ամենահանճարեղ բանաստեղծ Շոթա Ռուսթավելու ստեղծագործության մեջ:

Խոսել մեծ Շոթայի մասին, դա նշանակում է խոսել 12—13-րդ դարերի Վրաստանի մասին, մյուս կողմից՝ խոսել 12—13-րդ դարերի Վրաստանի մասին, դա նշանակում է խոսել մեծ Շոթայի մասին—այնպես են այդ երկու հասկացողությունները սերտորեն կապված իրար հետ,

12—13-րդ դարերի Վրաստանն այն բազան է, որը անց Շոթայի նման հանճարին: Հետևապես, միանգամայն բնական կլինեն նախ խոսել հիշյալ ժամանակաշրջանի Վրաստանի կացությունից մասին և ապա անցնել երկրորդ խնդրին, որը Շոթայի ստեղծագործությանն է վերաբերում:

Ֆեոդալական միապետությունը Վրաստանում 12—13-րդ դարերում՝ դա վրացական ֆեոդալիզմի վերելքի շրջանն է, որ հետևանք էր երկարատև

պայքարի, մի կողմից՝ կենտրոնախույս (դրսի պետութիւնների նկատմամբ) ուժերի, որոնք ձգտում էին ազատվել արաբական և բյուզանդական լծից, իսկ մյուս կողմից՝ կենտրոնաձիգ (վրացական պետականութեան նկատմամբ) ուժերի, որոնք ձգտում էին համախմբվել մի կենտրոնի, ասել է՝ մի հարստութեան (դինաստիայի) շուրջը:

Եթե 10-րդ դարի վերջին, Բագրատ 3-րդի օրոք, միմիայն Արևմտյան Վրաստանի (այն ժամանակ կոչվում էր «Արխաղեթ») համախմբումը տեղի ունեցավ, իսկ 11-րդ դարի կեսից, Բագրատ 4-րդի օրոք, սկսվում է Հարավային Վրաստանի զբաղումը, ապա 12-րդ դարի սկզբից, Դավիթ 2-րդ Շինող կոչվածի օրոք, Հարավային Վրաստանի հետ միասին, տեղի է ունենում Արևելյան ու Արևմտյան Վրաստանի (ամեր-խմերի) ամբողջացումը, որին հետզհետե կցվում են հարևան երկրները: Եւ այս հանգամանքն առիթ է տվել հիշյալ տնանուն պատմիչին ասելու, որ «Դավիթ արքայից-արքայի հովանու ներքո համախմբված էին ժողովուրդներ, լեզուներ, թագավորներ և արքաներ Օսեթի և Դիչախի, Հայաստանի և Փրանդստանի, Շարվանի և Պարսից երկրի՝ համաձայն տեսեան Նաբուգոդոնոսորի»:

Դավթի ժառանգների՝ Դեմետր 2-րդի, Գեորգ 3-րդի և ապա Թամարի ու վերջինիս ժառանգների՝ Գեորգ-Լաշայի և Ռուսուդանի օրոք, փոքր ընդ-միջումներով, Վրաստանի միապետական կազմակերպությունը ոչ միայն վերելքային ուղիով է ընթանում, այլև իր գազաթնակետին է հասնում, որից հետո արդեն, մոնղոլական արշավանքների շրջանից, սկսվում է նրա ճգնա-ժամը:

12-րդ դարի վերջում և 13-րդի սկզբներին Վրաստանը ներկայացնում է մի լայնածավալ պետություն, որը տարածվում էր «ծովից—ծով», այսինքն՝ Սև ծովից մինչև Կասպից ծովը և Հյուսիսային Կովկասից՝ Դիչախ—Օսեթից, մինչև Պարսկաստան, Խլաթ-Արճեշ, Երզնկա և Տրապիզոն, ուր ջախջախված Բյուզանդիայի սահմաններում 1204 թ. հիմնվում է Վրաստանից կախյալ Տրապիզոնի հունաց կայսրությունը:

«Ծովից—ծով» տարածված միապետական Վրաստանի գահակալներից ամենանշանավորը համարվում է Թամարը, որին վրաց պատմական աղբյուրները «Թագավոր» (մեփե) և ոչ թե «Թագուհի» (դեդոփալի) են կոչում, քանի որ Թամարն իրոք ոչ թե որևէ գահակալ-Թագավորի ամուսինն էր, այլ ինքն էր գահակալ, ինչպես օրինակ, Եկատերինա 1-ին, Երկրավետա Պետրովնա, Եկատերինա 2-րդ և այլն Ռուսաստանում, նմանապես մի քանիսը՝ Արևմտյան Եվրոպայում: Լինելով վրաց Բագրատունյաց Գեորգ 3-րդ Թագավորի միակ զավակը՝ Թամարը 1184 թ. ստանձնեց իր հոր գահը և մնաց այդ գահի վրա մինչև մահը՝ 1213 թ.: Նա ամուսնացած էր երկու անգամ— նախ՝ ռուսաց մեծ իշխան Անդրեյ Բոգոլյուբսկու որդի Յուրի-Գեորգի հետ, որի հետ կենակցեց կարճ ժամանակ և ապա բաժանվեց, իսկ երկրորդ անգամ՝ ալանաց (օսերի) արքայազն Դավիթ Սոսլանի (Օսալանի) հետ, որից ունեցավ մի տղա՝ Գեորգ-Լաշա, և մի աղջիկ՝ Ռուսուդան անունով: Հետեւապես, այս Թամարին չպետք է շփոթել Դավիթ Շինողի դուստր Թամարի հետ, որը Շարվան-շահի կինն էր և այրիանալով՝ մտավ կուսանոց ու հայտնի է իբրև Թիդվայի տաճարի կառուցող:

12—13-րդ դ. դ. ժամանակաշրջանը ֆեոդալական-միապետական Վրաստանի ոսկեդարն է ոչ միայն քաղաքականապես, այլև նյութական ու մտավոր կուլտուրայի զարգացման ու ծաղկման տեսակետից:

Եվ իրոք, նյութական կուլտուրան, ներկայացրած բազմաթիվ բերդաքաղաքների, ամրոցների, պալատների, եկեղեցիների, վանքերի, տաճարների, ճանապարհների, կամուրջների, քարվանսարանների, բաղանիքների, ջրմուղների, ջրանցքների և այլն օրեկաներով, նմանապես և կերպարվեստի գրեթե բոլոր բնագավառների ամենաբարձր որակի նմուշներով (քանդակագործություն, պատկերազրույթուն, գործվածքներ, ոսկերչություն և այլն)—մեկ կողմից, և մտավոր կուլտուրան, ներկայացրած հոգևոր և աշխարհիկ գրականության հոյակապ գործերով (էպիկական-վիպական գրականություն, բանաստեղծություն, փիլիսոփայություն, աստվածաբանություն, պատմագրություն և այլն)—մյուս կողմից, ահա այն պերճախոս փաստերը, որոնք միաբերան վկայում են, որ հիշյալ ժամանակաշրջանում ֆեոդալական կուլտուրան Վրաստանում հասած է եղել իր ծաղկման գագաթնակետին:

Հինյ այս ժամանակ, ի միջի այլոց, տեղի է ունենում ֆեոդալական կուլտուրայի վերելքը և Հյուսիսային Հայաստանում, որտեղ կառուցվում են բազմաթիվ բերդեր և վանքեր (Հառիճ, Գետիկ, Հաղարծին, Բջնիի պղնձահանք, Հոռամայր, Տիգրան Հոնենցի եկեղեցին Անիում և այլն), նաև ծաղկում է այսպես կոչված Սանահին—Հաղբատյան գրական դպրոցն իր ճյուղերով՝ դեռ Հովհաննես Սարկավազ վարդապետ Հաղբատացու և ապա Գրիգոր Տուսեորդու ու Մխիթար Գոշի ղեկավարությամբ, որոնց մասին վրաց պատմիչը 12-րդ դարում նշում է, որ «սրանք պարծենում էին նրանով, թե ինչպես հասել են ամենայն ուսմանց և գիտության գագաթնակետին» (ազնորդես թավթա թվիսթա միղձեվադ թավսա ղովլիսա սծավլուլբերիսա դա մեց-նիերբերիսասա):

Սակայն ֆեոդալական կուլտուրայի գագաթնակետին հասնելը դեռևս չի նշանակում, որ նույն շրջանում Վրաստանը զերծ էր ներքին «խռովություններից» և «խլրտումներից»: Ահա Օրբելյանների ապստամբությունը (Գեորգ 3-րդի օրով, 1177 թվին), որի ճնշման գործում վրաց Բագրատունիները մեծ ձիգ ու ջանք թափեցին Մխարբրձենների (Ջաքարյաններ) օժանդակությամբ: Ահա առևտրական խավերի ոտնձգությունները՝ խառնըվելու Թամարի ամուսնության խնդիրներում (Աբուլխանի և Ջանքան Ջուրաբաբելի ելույթները): Ահա բարձր ավատականության գործադուլը (մոտավորապես 1186 թվին) միահեծանությունը սահմանափակելու համար (Ղուկու—Արսլանի ծրագիրը): Ահա հայ-վրացական բաղխումը 1197 թվին կրոնական վեճերի աստառով (այդ բաղխման մասին մանրամասն խոսում են Թամարի անանուն պատմիչը, Մխիթար Գոշը և ասորի գրող Գրիգոր Բարսեբրեսը՝ Աբուլ-Ֆարաջ կոչեցյալը):

Ընդամենն, Վրաստանի միահեծանությունը Թամարի օրոք ոչ այլ ինչ է, բայց եթե արտացոլում երկրում տիրող դասերի հարաբերակցության, ուր ֆեոդալական աշխարհիկ և հոգևոր խավերի կողքին որոշ գեր էին խաղում առևտրական շրջանները, որոնք շահագրգռված էին, որպեսզի Վրաստանում ֆեոդալական ցանցը վերացվի և Արևելքի ու Արևմուտքի օղակում

գտնվող պետութիւնը փակվածութիւնից հանվի, որքան էլ այդ նպատեւլու էր թե ներքին և թե արտաքին առևտրի ծավալմանը համեմատաբար լայն մասշտաբով:

Գտնվելով երկու մեծ կուլտուրաների, մի կողմից՝ արեւելյան մահմեդական իրանա-արաբական, և մյուս կողմից՝ արեւմտյան քրիստոնեական հունա-բյուզանդական կուլտուրաների խաչաձևման շրջանում, Վրաստանը հիշյալ դարերում հասնում է այնպիսի բարձունքի, որը բնորոշվում է իբրև իսկական ռենեսանս և հումանիզմ և որի նմանը ֆեոդալական Վրաստանի պատմութեան մեջ, ինչպես Ն. Մառն էլ իրավացիորեն դիտել էր՝ այլևս «չի կրկնվել»:

Դժբախտաբար, վրաց պատմական աղբյուրների մեջ Շոթա Ռուսթավելու անունը, որպես այդպիսին, առհասարակ չի հիշվում: «Վագրենավորը» պոեմի մեջ ինքը հեղինակը քանիցս իրեն անվանում է «Ռուսթավելի» այսինքն, «Ռուսթավելի», առանց անունը հիշելու (երկու անգամ նախերգանքում և մեկ անգամ վերջերգում) և մեկ անգամ էլ իրեն անվանում է «ոմն մեսխ բանաստեղծ» (վերջերգում):

«Ռուսթավ» (վրացերեն «Ռուսթավի») անունով Վրաստանում երկու աշխարհագրական կետ կա, մեկը՝ նախկին «Բոստան-քալաքի» (ոստան քաղաք) կոչվածը, Թբիլիսիի մոտ, զեպի արևելք, Գարդաբան կայսրանին կից, իսկ մյուսը՝ Ախալացիխի մոտ, հին Մեսխեթիում: Ըստ այսմ, Ռուսթավելագետների մի մասը կարծում է, որ մեծ բանաստեղծը Հերթ-Գարդաբանցի պիտի լինի, իսկ մյուսը՝ Մեսխեցի, թեև ինքը՝ բանաստեղծը պոեմի վերջերգում (որ ոմանք կեղծ են համարում) իրեն անվանում է «Մեսխ»:

Ինչ վերաբերում է «Շոթա» անվանը, այն հիշվում է միմիայն հետագա դարերի ձեռագրերում: Ըստ պրոֆեսոր Ա. Խախանաշվիլու, ապա և ահագեմիկ Ն. Մառի, այս անունը կարծես թե նույն «Աշոտ»-ը լինի, սակայն ավելի ճիշտ է այն տեսակետը, որով «Շոթա»-ն կապվում է հեթանոսական «Աշոթան» անվան հետ (հմմ. վրացերեն «շոթի» բառը):

Ռուսթավելագետներից ոմանք կարծում են, թե 14-րդ դարի անանուն ժամանակագրի հիշած ոմն իշխան Շոթա Կուպրի կամ Կուպարը նույն Շոթա Ռուսթավելին պիտի լինի: Այդ պատմիչը, խոսելով Ռուսուդան թագուհու ժամանակաշրջանի (1223—1247) մասին, առնվազն չորս անգամ հիշում է Հերթի էրիսթավ, այսինքն իշխան, Շոթա Կուպրի կամ Կուպրին, որը մի քանի այլ իշխանների հետ ուղարկվել է մոնղոլական զանի մոտ, նաև մասնակցել է Կոխտա լեռան զլխին (Բակուրիանիի մոտ) գումարված խորհրդակցութեանը: Իշխաններից հիշվում են՝ Շահնշահ, Ավագ, Վահրամ Գագեցի, Գրիգոր Սուրամեցի, Սարգիս Թմոզվելի, Թորելի Գամբեկել, Դավաղվար և ուրիշները: Սրանցից երեքը, այն է՝ Շոթան, Գամբեկելը և Ավագը հիշվում են նաև Մանգլիսի մոտերքը գտնվող մի հուշարձանի վրացերեն արձանագրութեան մեջ, բարեկեփի վերեկից, ուր քանդակագործած է չորս տղամարդկանց՝ իշխանների դեմքեր: Ուստի և ենթադրվում է, թե այս բարեկեփի «Շոթա»-ն և անանուն ժամանակագրի «Շոթա» Կուպրի-Կուպարը միևնույն անձնավորութեանը պիտի լինի:

Անանուն ժամանակագրի երկասիրությունը պարունակող ձեռագրերից մեկում «Շոթա Կուպարի»-ի հիշատակությունը կցված է հետևյալ նախադասությունը. «Տղամարդուն վախել վարք ու բարքից միանգամայն զուրկ», որը ոմանք մեկնաբանում են այն իմաստով, իբր թե այստեղ ակնարկ լինի Շոթայի ոչ ուղղափառ քրիստոնյա, այլ աղանդավոր լինելու մասին: Եվ իբրև ապացույց բերում են մի այլ նախադասությունը՝ նույն ժամանակագրի գրվածքից, ուր ասված է, որ Էրիսթավ Շոթան Կուպրի կամ Կուպար էր կոչվում «մանիս փերի» լինելու պատճառով, ուր «մանիս փերի» մեկնաբանում են իբրև «մանիի (աղանդավորների) պետ» և, ըստ այսմ էլ՝ «Կուպրի» — «Կուպար» բառը՝ իբրև «քափար» կամ «գյառը», այսինքն՝ անհավատ: Մինչդեռ բոլոր ձեռագրերում այդ «մանիի փերի»-ի փոխարեն կարգացվում է «չավի փերի», այսինքն՝ սև կամ թուխ գույն, որը միանգամայն համապատասխանում է «կուպրի» — «կուպար» կոչմանը՝ կուպր իմաստով:

Իսկ Շոթայի «մանիի գլուխ» լինելը պետք եղավ ուսումնասիրագետներից ոմանց, որպեսզի ապացուցեին մեծ բանաստեղծի այսպես կոչված մանիքեական աղանդին մասնակից լինելը և դրանով հիմնավորեին «Վազրենավորը» պոեմի զերծ մնալը քրիստոնեական սքոլաստիկայի ազդեցությունից, քանի որ պոեմն սկզբից մինչև վերջը հեթանոսական և մահմեդական աշխարհայացքով է զրոշմված: Միաժամանակ, եղան և այնպիսիներ, որոնք Շոթային պարզապես մահմեդական հայտարարեցին:

Մի կողմ թողնելով այստեղ հիշված վիճաբանելի խնդիրը, թե Շոթա Կուպրի-Կուպարն արդյոք նույն Շոթա Ռուսթավելին է թե՞ ոչ, կհիշենք, սակայն, որ «Վազրենավորը» պոեմը դարերի ընթացքում մերժված էր վրաց կղերամիտ բանակի կողմից: Եվ այս հանգամանքը որոշ արտահայտություն է գտել ոչ միայն այն փաստի մեջ, որ, ըստ վրաց պատմաբան-հնագետ Պլատոն Խոսելիանու՝ պոեմի 1712 թվի վախտանգյան անդրանիկ հրատաքակությունը, Անտոն 1-ին կաթողիկոսի կարգադրությամբ, մեծ քանակով հավաքել են մի տեղ և ապա Կուր դետը թափել, այլև «Վազրենավորը» պոեմի 17-րդ դարի մի ձեռագրի կցորդում, ուր ասված է, որ «Վազրենավորը» կոչված երկն սկզբից մինչև վերջ պարսկերեն (այսինքն՝ մահմեդական ոգով հորինած) մի գրվածք է, ուր մարմնի մասին է խոսվում, իսկ հոգու մասին և ոչ մի բառ, որ այն աշխարհիկ գրվածք է և չի հիշում «համազո երրորդությունը», հետևապես և ոչ մի օգուտ ընթերցողին նա չի կարող տալ «աշխարհիս կործանման ժամին»:

Համոզված լինելով, որ «Վազրենավորը» պոեմի ընդհանուր բովանդակությունը փոքրիշատե ծանոթ է ընթերցողներին՝ գոնե Գ. Ասատուրի թարգմանությամբ, այժմ անցնենք այն հարցին, թե ո՞ր դարի հեղինակ է Շոթա Ռուսթավելին:

Ընդհանուր կարծիքով, որ առհասարակ արմատացել է վրաց հասարակության ամենալայն շրջաններում՝ սկսած պրոֆ. Դավիթ Չուբինովից, Շոթան Թամարի ժամանակակից է և իր երկը ձոնում է նույն Թամարին ու վերջինիս երկրորդ ամուսին Դավիթ Սոսլանին (Օսալանին), որոնք հիշվում են պոեմի նախերգանքում և վերջերգում: Սակայն, ոմանք կարծում են, որ պոեմը գրված է Թամարից հետո, մոնղոլական տիրապետության օրոք, մո-

տավորապես 13-րդ դարի 60-ական թվականներին, ոմանց կարծիքով՝ նույնիսկ 14-րդ դարում: Բացի դրանից, եղան և այնպիսիները, որոնք պոեմը վերագրեցին Դավիթ Շինողի (1089—1125) ժամանակաշրջանին, կարծելով, որ այս Դավիթն է հիշված պոեմի վերջերգում և ոչ թե Դավիթ Սոսլանը:

Դեռ ավելին: Եղան և այնպիսիները, որոնք տշխատեցին պոեմն ամբողջապես վերագրել Սարգիս Թմոզվելուն, որը, ոմանց կարծիքով՝ 12—13-րդ դարի, ոմանց կարծիքով էլ՝ 13-րդ դարի երկրորդ կեսի, նույնիսկ 14-րդ դարի գործիչ էր:

Մեր կարծիքով՝ «Վագրենավորը» պոեմի ժամանակագրությունը, ում գրվածն էլ ուզում է այն լինի, պիտի որոշվի ոչ թե պոեմի այս կամ այն տան կամ տողի մեկնաբանության համաձայն, որ իրոք այս կամ այն դեպքում կարող է հետագա դարերի արտագրողի ներմուծում լինել այս կամ այն «ստացողի» պատվերի համաձայն, այլ պոեմի բովանդակության ամբողջության հիման վրա: Իսկ բովանդակությունը պարզ ցույց է տալիս, որ այնտեղ խոսքը Գեորգ 3-րդի և նրա միակ ժառանգ՝ Թամարի մասին է, որոնք Արաբստանի թագավոր Ռոստեանի և նրա միակ ժառանգ Թինաթինի դեմքով են ցուցաբերած:

Ահա թե ինչ ենք կարդում «Վագրենավորը» պոեմի առաջին գլխում՝ «Ռոստեան արաբական թագավորի մասին» վերնագրով, որն առաջ ենք բերում Հովհ. Կարապետյանի թարգմանությամբ (չնչին ուղղղումներով մեր կողմից)։—

Արաբստանում Ռոստեանն արքա էր քաջ, բախտավոր,
Առատաձեռն, վեհանձն ու հեզ, ուներ բանակ բյուրավոր,
Արդարադատ և ողորմած, հեռատես ու մըտածող,
Ինքը կըրվող մի քաջարի, քաղցրալեզու զըրուցող:

Շատ որդիներ չունեի արքան, միայն աղջիկ ուներ մի,
Որ աշխարհին լույս էր տալիս՝ նման պայծառ արևի.
Նա զերում էր իր տեսնողի ամբողջ հոգին, ուշքն ու միտք,
Իմաստունը նրա գովքը բարձրացնում էր մինչ երկինք:

Թինաթին էր անունըն այն չըքնաղագեղ նազելու.
Երբ մեծացավ՝ արժանի էր արևից վեր դասվելու.
Թագավորը կանչեց իր մոտ վեզիրներին միասին,
Նըրանց զիմեց քաղցըր լեզվով և խոսքերով այսպիսի:

Ասաց՝ «Պետք է ես կարևոր խորհուրդ հարցնեմ ձեզանից.
Երբ որ վարդը թառամում է, տեսքն է կորցնում գեղանի.
Նա փընտռում է, որ պարտիզում ուրիշ վարդի տեղ անի.
Արդ արևըս մայր է մըտել, խամրել, անկախ մեզանից:

Ես իմ օրերն անց եմ կացրել ծերացել եմ, թուլացել.
Էսօր-էգուց մեռնելու եմ, տերըն այս է կարգադրել:

Ի՞նչ է լույսը, երբ խավարը նըրան ընկեր է դառել.
Ժամ է, կարծեմ, աղջըկանըս իմ փոխարեն թագադրել»:

Վեղիբները ասին՝ «Արքա, ի՞նչ ասել է ձերություն.
Վարդը նույնիսկ թառամած էլ չունի ոչ մի թերություն.
Դեռ ավելին, նըրա բույրը դուրեկան է ավելի.
Միթե գունատ լուսնի կողքին վառ աստղն է գովելի:

Այդ մի ասիլ, տեր թագավոր, գեռ վարդը չի թառամել.
Քո վառ խոսքը լավ է ուրիշ քաղցըր խոսքից առավել.
Բայց երբ ինքըդ ես ցանկանում՝ առանց երկյուղ ու ահի,
Պիտ աղջիկըդ արևափայլ տիրի շքեղ քո գահին:

Աղջիկ է, բայց աստըծուց թագավոր է ըստեղծված.
Առանց ձեզ էլ կարող է նա թագավորել անկասկած,
Արևափայլ իր տեսքի հետ շընորհք ունի ակնառու.
Կորյունն առյուծ է դառնալու՝ նա էգ լինի թե արու»:

Իր պոեմի նախերգանքում Շ. Ռուսթավելին նվիրում է թամարին հետևյալ տողերը, որ մենք առաջ ենք բերում համաձայն Վահան Տերյանի թարգմանության. —

Երգենք թամար արքայուհուն, լալով արյուն-արցունք առատ,
Նըրան ձոնած երգըս՝ ընտիր և ինձ թանաք՝ լըճերը սաթ,
Ու գրիչն ինձ՝ գողգոջն եղեդ, երգես որպես սուրսայր մի խայթ,
Թող լըսողի սիրտը մեխվի, ձեզքե որպես տեգ մի պողպատ:

Պատվիրեց, որ գովեմ իրան երգով անուն ու ուրուռն,
Իր հոնքն աղեղ, թարթիչը նետ, սաթ-վարսն ու լալն իր շուրթերում,
Ատաճառարն իր գեղանի՝ բյուրեղներից հյուսված սիրուն.
Ձէ՞ որ արձիճի զընդանին էլ մուրճը կարծըր քար է փըշրում:

Սյուժեի վերաբերյալ մի ժամանակ տիրում էր այն կարծիքը, իբր թե այն իրանականից է վերցրած և վրացերենի վերածված մի այնպիսի բնագրից, որը կորել է և մեզ չի հասել, կամ տեղական մշակումն է իրանական գրականության մեջ հայտնի «Շահրիար-նամա» վեպի, որի գլխավոր հերոս Շահրիար-Շարիբը վրացականում «Տարիել»-ի է վերածած:

Որ «Վազրենավորը» պոեմի մեջ, իրոք, ներկայացված է արևելյան, պարզապես իրանական-արաբական աշխարհը (Արաբստան, Խատաեթ, Խվա-րազմ, Հնդկաստան և այլն) ու բոլոր հերոսներն ու գործող անձինք էլ այդ աշխարհից են վերցրած, այդ միանգամայն պարզ է: Բայց միթե հանճարեղ բանաստեղծը պարտավոր էր իր վեպի, իբրև գեղարվեստական գրվածքի, սյուժեի անպայման Վրաստանի իրականությունից վերցնել: Ի հարկե, ոչ:

«Վազրենավորը» պոեմի ծագման խնդրի համար էական նշանակություն ունի նախերգանքի 9-րդ տան առաջին տողը, ուր կարդում ենք.

«Էսե ամբալի սպարսուլի քարթուլադ նաթարգմաների»,
որ սովորաբար թարգմանում էին այսպես.

«Պարսկական այս զրույցը վրացերեն թարգմանված»:

Մինչդեռ պարսկական զրույց ասելով՝ հեղինակը հասկանում է ոչ թե իր վեպի պարսկերեն բնագիր-պրոտոտիպը, այլ պարսկական-արաբական, ասել է՝ մահմեդական աշխարհից վերցված սյուժեն կամ ֆաբուլան, որ նա օգտագործել է իր վեպի համար, քանի որ վրացերենում «սպարսուլի»-ն այն իմաստն ունի, ինչ էլ «թաթրուլի» մահմեդականի առումով, ինչպես հայերենում «թյուրքական» ասելով շատ հաճախ հասկանում են մահմեդական-իսլամական աշխարհին պատկանող մի բան: Այս մեկ:

Երկրորդն այն է, որ «քարթուլի» բառը վրացերենում նշանակում է ոչ միայն վրացերեն, այլ և բարձր ոճով ասմունք, ճարտասանություն, հոստորություն, ինչպես այդ մեկնաբանված է «Վազրենավորը» պոեմի նոր գտնված, այսպես կոչված Ղարաբաղյան (Ավետարանոց կամ Չանախչի գյուղում 1826 թ. արտագրած) վարիանտ-ձեռագրին կցված բառարանում, որ մեր հրատարակութամբ լույս տեսավ 1936 թ. «Թբիլիսիի պետ. համալսարանի աշխատությունները», հ. 5-րդում ուր, ի միջի այլոց, կարդում ենք.

«Բարթուլի—սիրտովա անուռ ուրնորա թավազիանի»,
այսինքն՝

քարթուլի—խոսք է կամ սիրալիր ասմունք:

Այս դեպքում «քարթուլի»-ն նույն իմաստն ունի, ինչ հայոց «հայերեն»-«հայրեն»-ը: Եւ այսպիսի մեկնաբանությունը միանգամայն համապատասխանում է Շոթա Ռուսթավելու ժամանակակից Մխիթար Գոշի կազմած «Դատաստանագրքի» վրացերեն թարգմանությանը, ուր կարդում ենք.

Ըստ Մխիթար Գոշի (գիրք 1-ին, § 44) «Կարծեցուցանէ և յաղաղ քահանայից վասն ասելոյն» (Վ. Բաստամյանցի հրատ., Վաղարշապատ, 1880, էջ 140):

Այս կտորի հայերեն բնագրի ասել բառը նույն Դատաստանագրքի 18-րդ դարի սկզբների վրացերեն թարգմանության մեջ, որ դարձյալ մենք ենք հրատարակել 1927 թ. (տես Թբիլիսիի համալսարանի հրատ., էջ 96) թարգմանված է ֆարքուլի ձևով.

«Ունդա մոնաներա մղվելիս ֆարքուլիք»,
այսինքն՝

«Պետք է զղճա քահանայի ասմունքով»,

Նույնպես և Սայաթ-Նովան իր վրացերեն խաղերից մեկում, ի միջի այլոց, ասում է (Ի. Գրիշաշվիլու հրատ., էջ 111).

«Էրթի սիրտովա ֆարքուլի մաքլս»,
այսինքն՝

«Մի խոսք ունիմ ֆարքուլի»:

Այստեղ ևս փառքովի-ն համապատասխանում է բարձր ոճով ասմունքին, հայրենի՛ն, հայերենի՛ն:

Երրորդ. «Թարգմանի», «նաթարգմաների» բառը հին վրացերենում նշանակում է ոչ թե «թարգմանություն», «թարգմանված», այլ մեկնաբանություն, մեկնաբանած:

Հետևապես, «Վազրենավորը» պոեմի համապատասխան տան մեզ հետքերը տողը պետք է հասկանալ այսպես. «Պարսկական (մահմեդական) կյանքից վերցրած այս զրույցը բարձր ոճով է գրված (մեկնաբանած)»:

Մրա կապակցությունը որոշ իմաստ է ստանում նաև պոեմի նախերգանքի նույն 9-րդ տան 2-րդ տողը, ուր կարդում ենք.

«Վիթ մարգարիտի օրովի, խելիս խել սազոգմաների»,

որը նշանակում է ոչ թե՝

«Ինչպես որք մարգարիտը ձեռքից ձեռք թավալվող»,

այլ՝

«Ինչպես հազվագյուտ մարգարիտ ձեռքից ձեռք թավալվող»:

Սրանով հեղինակն ուզում է ասել, որ իր ձեռքն ընկած սյուժեն (ֆաբուլան) հազվագյուտ մարգարտի տեսակի բան է:

Մոտե Սոնեկու «Ամիրանդարեջանիանի»-ի, Շավթեկու «Աբդուլ-Մեսիա»-ի, Սարգիս Թմոզվելու «Դիլարգեթի»-ի (Դիլարիանի), նաև «Տարիել»-ի (Տարեխանի) մասին պոեմի վերջաբանում բերված հիշատակությունները ցույց են տալիս, որ հեղինակը լավ ծանոթ է ժամանակակից և նախորդ շրջանի վրաց գրականությանը, ինչպես և ժողովրդական բանահյուսությանը, որտեղից էլ նա առատ կերպով քաղում է իրեն համար կարևոր նյութերը (սյուժեն, ավանդությունները, առածները և այլն):

Վրաց գրավոր և բանավոր գրականությունից զատ, Շոթա Ռուսթավելին քաջ ծանոթ է նաև արևելյան ու արևմտյան գրականություններին. հատկապես նա ծանոթ է իրանական գրականությունից Գուրգանի «Վիսոմամին»-ի հետ. այդ երեւում է պոեմի հետևյալ տողերից, նվիրված Ավթանգիլին, որ մենք առաջ ենք բերում Գ. Ասատուրի թարգմանությունը.

Մի օր մըտավ նա մի երկիր անմարդաբնակ, վայրի, տըրտում,

Ամբողջ ամիս նա ման եկավ, չըհանդիպեց աղամորդու.

Այդպիսի ցավ չէր հանդիպել ոչ Ռամին և ոչ Վիսին.

Օր ու գիշեր նա մըտորում էր միայն իր յարի մասին:

Միաժամանակ, Ռուսթավելին լավ ծանոթ է հին և ժամանակակից փիլիսոփայությանն ու կրոնական աշխարհայացքներին, ինչպես և հին «աստվաբաշխությանը», երբ արևի ու լուսնի հետ միասին հիշատակում է Զուար, Մուշթար, Մարիս, Ասպիրոզ և Օտարիզ լուսաստուները, իսկ Թամարին աստվածացնելով՝ արևին է նմանեցնում:

ЗАМЕТКИ ВОКРУГ ШОТА РУСТАВЕЛИ И ЕГО ПОЭМЫ „ВИТЯЗЬ В ТИГРОВОЙ ШКУРЕ“

(Р Е З Ю М Е)

Считая в основном правильным традиционное мнение, согласно которому Шота Руставели признается современником царицы Тамары (1184—1213), автор статьи останавливается на некоторых деталях из цикла вопросов по руставелологии, давая таковым то или иное освещение. В частности, наличие в одной из строф пролога слова „к'арт'ули“ признается термином не этнического порядка, а как обозначение высокого стиля стихотворной обработки, в противовес прозаическому изложению, велеречия и пр. И в этом смысле „к'арт'ули“ находит определенную аналогию в армянском „хайрен“ = „хайрен“. Так понят этот термин также в грузинском переводе Судебника Мхитара Гоша, т. н. карабахском варианте поэмы Шота Руставели, и у Саят-Новы (в одном из грузинских стихов).

Л. Меликсет-Бек